ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ 33-26
19.05.2026

«Ռազ Կապիտալ» ՍՊԸ
տնօրեն Ա. Զախարյանին
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, ՍԻԼԻՑԱՆ ԹՂՄ. 10 Փ/Տ/ 25/3
ՀՎՀՀ՝ 01370389
Էլ. հասցե՝ raz-capital@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագրի միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Զախարյան

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ռազ Կապիտալ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 2026 թվականի մարտիի 6-ին կնքվել է « ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-2» ծածկագրով պայմանագիր:

Ձեր կողմից սահմանված ժամկետներում բոլոր ապրանքները մատակարարվել են՝ բացառությամբ պայմանագրի 8-րդ չափաբաժնից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված ՀՀ կառավարությաքն 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն, սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով այն փաստը, որ «ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-2» ծածկագրով գնման պայմանագրի 8-րդ չափաբաժնի մասով պայմանագրի և որակավորման ապահովումները մասնակցի կողմից ամբողջությամբ փոխանցվել է Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ 2473600002170010 հաշվեհամարին և այդ մասին գրավոր տեղեկացվնել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը), ապա «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն որոշում է կայացրել «ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-2» ծածկագրով գնման պայմանագրի 8-րդ չափաբաժնի մասով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Ռազ Կապիտալ» ՍՊԸ-ի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

18.05.2026թ.

Կատարող՝ Մատակարարման և Գնումների
բաժնի պետ,Դ. Գրիգորյան
Հեռ. 011 47 27 71